ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ» ԿԱՅՔՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ

Կայքում նկատվել են լեզվական որոշակի անճշտություններ:

Ամփոփագիրը կազմելիս վրիպակներին ուշադրություն չենք դարձրել, իսկ կետադրական սխալներին անդրադարձել ենք այն դեպքում, երբ բերված օրինակներում եղել են նաև այլ անճշտություններ:

Ստորև ներկայացնում ենք նկատված սխալների օրինակներ:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Թիմում արդեն *ընդգրկված են* շուրջ 30 *սան՝* յոթ տարեկանից մինչև 16 տարեկան» (««Սյունիք» ֆուտբոլային ակումբի աղջիկների թիմը», 07.03.2024):

Կա թվային անհամաձայնություն:

Կա՛մ պետք էր գրել «***ընդգրկված է*** շուրջ 30 ***սան***», կա՛մ՝ «***ընդգրկված են*** շուրջ 30 ***սաներ***»:

«*Ցանկություն կա ընդլայնել* աղջիկների թիմի ընդգրկվածության աշխարհագրությունը ....» (««Սյունիք» ֆուտբոլային ակումբի աղջիկների թիմը», 07.03.2024), «.... «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համարի նախապատրաստության ընթացքում *անհրաժեշտություն առաջացավ զրուցել* ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ» («Սյունիքի մարզաշխարհը. հարցազրույց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի հետ», 13.03.2024), «.... *անհրաժեշտություն է առաջացել որոշակիացնել* ԿԳՄՍ նախարարության դիրքորոշումը ....» (նույն տեղում), «Նախաձեռնությունը *նպատակ ուներ բացահայտել* համայնքի շնորհալի կանանց ....» («Կանայք հանդես եկան ....», 08.04.2024):

Բոլոր օրինակներում կա խնդրառական անճշտություն:

Պետք էր գրել. «***Ցանկություն կա*** (ինչի՞) ***ընդլայնելու*** ….», «…. ***անհրաժեշտություն առաջացավ զրուցելու*** ….», «…. ***անհրաժեշտություն է առաջացել որոշակիացնելու*** ….», «…. ***նպատակ ուներ բացահայտելու*** ….»:

«Պիեսն *ինքը* ծայրից ծայր ….» («Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում», 30.03.2024):

Մեր լեզվում վերջերս բավական հաճախ հանդիպող սխալներից է:

Ինքը-ն անձնական դերանուն է: Չի կարող փոխարինել առարկա ցույց տվող բառերի: Այստեղ այն նաև ավելորդ է:

Կարելի էր գրել. «***Պիեսը ծայրից ծայր*** ….»:

«Եվ 69 դիմորդից առկա ուսուցման *բաժնում* քանի՞սն ընդունվեց» («Հարցազրույց ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն Լեոնիկ Պետրոսյանի հետ», 22.03.2024):

Ճիշտ կլիներ նշված բառը գործածել ուղղական հոլովով, որովհետև ընդունվում են ոչ թե բաժնում, այլ բաժին («Եվ 69 դիմորդից առկա ուսուցման ***բաժին*** քանի՞սն ընդունվեց»):

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Խնդրո առարկայի վրա ենք հրավիրում նաև Հայաստանի Հանրապետության *կառավարության* ….» («Ի՞նչ ճակատագիր է *սպասվում* Սուրբ Մովսես Տաթևացու (Խոտանանցու) շիրմին ….», 18.03.2024):

Տվյալ դեպքում *կառավարություն* բառը պետք էր գրել մեծատառով՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմնի անուն:

Անճշտություն կա նաև վերնագրում:

Հարկավոր էր գրել. «Ի՞նչ ճակատագիր է ***սպասում*** ….»:

Համանման դեպքերի մասին Լեզվի կոմիտեն հրապարակել է հորդորակ[1], որն առաջարկում ենք ընթերցել:

«Տարվա մեջ կնախաձեռնենք նաև *մանկա-պատանեկան* ներկայացումների շարք ....» («Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում», 30.03.2024):

Նշված բառը գրվում է առանց գծիկի, միասին՝ ***մանկապատանեկան***:

Ի դեպ, կայքի այլ նյութերում այսպես էլ գրված է:

ՍԽԱԼ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

«*Սկզբից* մեկ-երկու հոգի էին կամեցել *մասնակցել թիմին*» (««Սյունիք» ֆուտբոլային ակումբի աղջիկների թիմը», 07.03.2024):

Թիմին չեն մասնակցում:

Նախընտրելի է նման դեպքերում *սկզբից*-ի փոխարեն գրել ***սկզբում***:

Պետք էր կա՛մ գրել. «Սկզբում մեկ-երկու հոգի էին կամեցել ***անդամակցել (միանալ) թիմին***», կա՛մ, օրինակ. «Սկզբում մեկ-երկու հոգի էին կամեցել ***մասնակցել թիմի խաղերին (հանդիպումներին)***»:

«Ներկայացումն *ընթանում էր* գունային հետաքրքիր ու տպավորիչ *էֆեկտներով,* պարզության մեջ խորհրդավոր *դեկորներով,* մեկ՝ տագնապալի, մեկ՝ խաղաղավետ *երաժշտությամբ,* ինչը կլանված էր պահում հանդիսատեսին, *գեղարվեստական հյուսվածքի անկանխատեսելի ելևէջներով տանում սյուժեի հանգուցալուծմանը*» («Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում», 30.03.2024):

Անճշտությունները մի քանիսն են: Ըստ շարադրանքի՝ ներկայացումն ընթանում էր *էֆեկտներով, դեկորներով, երաժշտությամբ*:

Ճիշտ չէ *գեղարվեստական հյուսվածքի ելևէջներով* հանգուցալուծման տանել ձևակերպումը, իսկ սյուժեն, օրինակ, զարգանում է, այլ ոչ հանգուցալուծվում:

Նախադասությունը պետք էր շարադրել ամբողջովին այլ կերպով:

[1] Լեզվիկոմիտե.հայ//www.langcom.am, https://tinyurl.com/4wnubab2

«.... կարողացել է .... զավակներին անսահման սիրող ու նրանց հավատացող մոր հավերժական *կերպարը տալ*» («Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում», 30.03.2024):

Կերպարը կարելի է, օրինակ, ***ստեղծել, կերտել, մարմնավորել, ներկայացնել***, բայց ոչ տալ:

«.... մնում է *դարի ծգող* գորիսյան թատրոնն արդարացնի գորիսեցի հանդիսատեսի հույսերն ու ....» («Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում», 30.03.2024):

Անհասկանալի է, թե ի՛նչ է նկատի առնված *դարի ծգող* ասելով:

Ասելիքը պետք էր ձևակերպել այլ ձևով:

«Տուն-թանգարանի *հաստիքների կարգավորման*, *աշխատակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի* մասին էլի ենք խոսել, կարելի՞ է դրանք համարել *լուծված*» («Ակսել Բակունց –125 ....», 11. 04. 2025):

Հաստիքները չեն կարգավորվում, իսկ աշխատակազմը *բարոյահոգեբանական մթնոլորտ* չի ունենում:

Բացի այս, լուծվել կարող էին ոչ թե դրանք, այլ, օրինակ, դրանց վերաբերող հարցերը:

«Ի՞նչ կասեք տուն-թանգարանի ցուցասրահի, նրա նոր ցուցադրությունների, առհասարակ, բակունցյան *մասունքները վեր հանելու* ձեր առաքելության մասին» («Ակսել Բակունց –125 ....», 11.04.2025):

Ճիշտ չէ, անհասկանալի է *մասունքները վեր հանել* արտահայտությունը:

Միտքը պետք էր ձևակերպել այլ կերպով:

«Հաջողվու՞մ է բակունցյան նոր *հիշողություններ հայտնաբերել շառավիղից դուրս եկած* .... ժամանակներում» («Ակսել Բակունց-125 ....», 11.04.2025):

Ժամանակն իր ***շավղից*** է դուրս եկել (սայթաքել), ինչպես ասում էր Համլետը, այլ ոչ շառավղից:

Ճիշտ չէ նաև *հիշողություններ հայտնաբերել*-ը: Խոսքը հավանաբար Բակունցի հետ կապված հուշերի մասին է: Եթե նկատի է առնված դա, նախադասությունը կարելի էր կազմել այսպես. «Հաջողվու՞մ է ***Բակունցի մասին նոր հուշեր հայտնաբերել շավղից դուրս եկած*** .... ժամանակներում»:

ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«.... անդեմության ու անհոգության հանդեսը շարունակելուն միտված ջանքերը, *կարծեք*, այլևս սպասված արդյունքը չեն տալիս» («Ի՞նչ ճակատագիր է սպասվում Սուրբ Մովսես Տաթևացու ....», 18.03.2024):

Կարծեք եղանակավորող բառ չկա: Ճիշտ է ասել և գրել ***կարծես***:

«.... ադրբեջանցի փախստականները կվերադառնան Սյունիք, որը ժողովրդագրական արհեստական փոփոխության *շնորհիվ* մեր երկրամասը բռնազավթելու նոր ուղի կբացի» («Հայացք Սյունիքից. Ռուսաստանի և Իրանի հետ ռազմաքաղաքական ....», 14.03.2024):

Քանի որ *շնորհիվ* բառը ենթադրում է գործողության դրական հետևանք (արդյունք), ուստի այստեղ հարկավոր էր գործածել *պատճառով* կամ *հետևանքով* բառերից որևէ մեկը:

Ճիշտ կլիներ նաև *որը* շաղկապի փոխարեն գրել *ինչը* («.... ադրբեջանցի փախստականները կվերադառնան Սյունիք, ***ինչը*** ժողովրդագրական արհեստական փոփոխության *պատճառով* մեր երկրամասը բռնազավթելու նոր ուղի կբացի»):

ԼԵԶՎԱՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Եվ գլխավորը՝ մենք *ի վիճակի՞* ենք Թուրքիայի և Ադրբեջանի կողքին ունենալ ևս մեկ թշնամի ....» («Հայացք Սյունիքից ....», 14.03.2024):

Ի վիճակի-ն կարող լինելն է, բայց այստեղ կարող լինելու հարց չկա:

Նախադասությունը կարելի էր կազմել այսպես. «Եվ գլխավորը՝ ***մեզ հարկավո՞ր է*** Թուրքիայի և Ադրբեջանի կողքին ունենալ ևս մեկ թշնամի ....»:

Իսկ *ի վիճակի*-ն գործածելու դեպքում նախադասությունը պետք էր շարունակել այլ տրամաբանությամբ և գրել, օրինակ. «Եվ գլխավորը՝ մենք ***ի վիճակի՞*** ենք Թուրքիայի և Ադրբեջանի կողքին ***դիմակայելու*** ևս մեկ թշնամու ....»:

«Չի կարելի *հենց այնպես հնչեցված որևէ հարց թողնել* անպատասխան կամ անհետևանք» («Հայացք Սյունիքից ....», 14.03.2024):

Անհարթ շարադրանքի պատճառով ասվածը դարձել է առնվազն երկիմաստ:

Ճիշտ կլիներ գրել այսպիսի շարադասությամբ. «Չի կարելի ***հնչեցված որևէ հարց հենց այնպես թողնել*** անպատասխան կամ անհետևանք»:

«Մարտի 27-ին՝ *թատրոնի* միջազգային օրը, Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դահլիճում *բեմադրվեց* չեխ դրամատուգ Կարել Չապեկի «Մայրը» *պիեսի ներկայացման առաջնախաղը*» («Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում», 30. 03. 2024):

Բեմադրվում է ոչ թե առաջնախաղը, այլ, օրինակ, պիեսը:

Ճիշտ չէ *պիեսի ներկայացում* ձևակերպումը, իսկ *դահլիճում բառը* տվյալ դեպքում ավելորդ է:

Կա նաև ուղղագրական անճշտություն. *Թատրոնի միջազգային օր*-ը հարկավոր էր գրել մեծատառով:

Նախադասությունը կարելի էր կազմել, օրինակ, այսպես. «Մարտի 27-ին՝ Թատրոնի միջազգային օրը, Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնում ***կայացավ*** չեխ դրամատուրգ Կարել Չապեկի «Մայրը» ***պիեսի հիման վրա բեմադրված ներկայացման առաջնախաղը***»***:***

«*Գլխավոր դերում մայրն է*, ով այդ կռիվներում կորցնում է ամուսնուն ու իր չորս զավակին.... » («Առաջնախաղ՝ Գորիսի թատրոնի բեմում», 30.03.2024):

Դերում լինում է դերասանը, եթե խոսքը չունի փոխաբերական իմաստ: Տվյալ դեպքում թերևս ճիշտ կլիներ գրել. «***Գլխավոր հերոսը մայրն է*** ....»:

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Նրա *փոխանցմամբ*՝ այժմ մարզադպրոցի հարթակը և ցատկուղին համապատասխանում են միջազգային չափանիշներին ....» («Կապանում անցկացված բաց առաջնությունը տվեց իր պտուղները», 01.04.2024):

Տվյալ դեպքում փոխանցելու ոչինչ չկա:

Մեր խոսքում բավական տարածված այս սխալի պատճառն օտար լեզուների ազդեցությունն է: Ուղղակի պատճենումները հաճախ աղավաղում են մեր լեզվամտածողությունը: Սա հարկավոր է նկատի ունենալ և զգուշանալ:

Այստեղ կարելի էր ասել, օրինակ. «***Ըստ նրա***՝ այժմ մարզադպրոցի հարթակը և ցատկուղին համապատասխանում են ....»:

«Հիմնախնդիրների մասին ենք խոսում, բայց թիվ մեկ հիմնախնդիրը ոչ միայն ձեր բուհում, այլև ամբողջ Հայաստանում *կոնտիգենտի* հարցն է» («Հարցազրույց ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տնօրեն Լեռնիկ Պետրոսյանի հետ», 22.03.2024):

Կոնտինգենտ բառի հայերեն համարժեքները *քանակակազմ, հավաքակազմ* բառերն են: Այստեղ ճիշտ կլիներ գործածել ***քանակակազմ***-ը:

Լեզվական վերահսկողության բաժնի
գլխավոր մասնագետ՝ Գուրգեն Միքայելյան